

ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն
վարչական շրջանների
ընդհանուր իրավասության դատարանի դատավոր
Լ. Ավետիսյանին

թիվ ԵԱՔԴ/0016/01/14 քրեական գործով
տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչներ
Արթուր Սաքունց
Տաթևիկ Սիրադեղյան

ԴԱՏԱԿԱՆ ՃԱՌ

Հարգելի դատարան,

Մինչ ճառի բուն բովանդակությանն անդրադառնալը, ցանկանում եմ նշել, որ ի սկզբանե տուժող կողմի հիմնական նպատակը ոչ թե սույն գործով որպես ամբաստանյալ ներգրավված անձանց նկատմամբ առավելագույն պատիժ նշանակելուն հասնելը, այլ հետագայում նմանատիպ հանցագործությունների կանխումը, քանզի սույն գործով որպես տուժող ներգրավվել է 2 տարեկան և երեք ամսական Լիա Միսակյանը, ով կատարված ենթադրյալ հանցագործության արդյունքում մահացել է, այսինքն՝ խախտվել է նրա կյանքի իրավունքը:

Դատաքննության ընթացքում մեզ համար ձևավորվեց այն հիմնավոր կարծիքը, որ սույն գործով «Արաբկիր» ԲԿ-ի բուժանձնակազմի ներգրավվածները Լիա Միսակյանի մահվան փաստով քննության ընթացքում նպատակ էին հետապնդում ոչ թե հասնել երեխայի մահվան իրական հանգամանքների բացահայտմանը, որը հնարավորություն կտար վերացնել նաև բժշկական սպասարկման թերությունները, այլ՝ բժշկական հիմնարկի և բուժանձնակազմի մեղավորության միանշանակ հերքումը: Այնուամենայնիվ, փաստ է, որ Լիա Միսակյանն «Արաբկիր» ԲԿ է ընդունվել 2012 թվականի դեկտեմբերի 31-ին, ժամը 20:20-ի սահմաններում, և այնտեղ մահացել է 2013 թվականի հունվարի 3-ին՝ 00:20-ի սահմաններում:

Դատաքննությամբ ձեռք բերված ապացույցները և դրանց գնահատում

Սույն գործով դատաքննության ընթացքում հարցաքննվեցին տուժողի իրավահաջորդը, ամբաստանյալները, գործով ներգրավված մի շարք վկաներ, որոնց հիմնական մասն «Արաբկիր» բժշկական հիմնարկում Լիա Միսակյանի բուժման ժամանակ աշխատած և հերթապահած աշխատակիցներ են, հետազոտվեցին նախաքննության

ընթացքում կատարված փորձաքննությունների եզրակացությունները, տրված եզրակացությունների վերաբերյալ դատարանում ցուցմունք տվեցին ներգրավված փորձագետները: Այս ամբողջի, ինչպես նաև դատարանում հրապարակված նախաքննության նյութերի համակցությամբ անդրադառնանք դեպքի առթիվ ձեռք բերված փաստերին և դրանց գնահատման հարցին:

Այսպես, Լիա Միսակյանի մոտ առողջական խնդիրներ նկատվել են 2012 թվականի դեկտեմբերի 15-ի շրջանում, նրա մոտ եղել է ջերմություն, հազ: Ծնողները տնային պայմաններում ջերմիջեցնող դեղամիջոցներ են տվել, 2-3 օրվա ընթացքում երեխայի վիճակը կայունացել է և, ծնողները, գտնելով, որ նրա վիճակը կարգավորվել է, նույնիսկ երեխային ուղարկել են մանկապարտեզ: Սակայն, 2012 թվականի դեկտեմբերի 30-ին երեխայի վիճակը վերստին վատացել է, բարձրացել է ջերմությունը, սկսվել է գրիպոզ վիճակ, և ծնողները նորից ջերմիջեցնող են տվել, սակայն հաջորդ օրը, դեկտեմբերի 31-ին Լիա Միսակյանի վիճակում փոփոխություն տեղի չի ունեցել: Նա կրկին ջերմել է, ծնողները կրկին ջերմիջեցնող են տվել, երեխան սնունդ է ընդունել, այնուհետև հանկարծակի աչքերի բիբերը բարձրացել են վերև, երեխայի մոտ ցնցում է սկսվել: Երեխայի հայրը, Գեորգի Միսակյանն ուշքի է բերել երեխային, այնուհետև հրավիրված շտապօգնության բժիշկները ներարկում են կատարել և անհրաժեշտ համարել երեխային հիվանդանոց տեղափոխելը (բժշկական հիմնարկ ընդունվելու ժամանակ Լիա Միսակյանի մայրն ընդունող բժշկին պատմել է երեխայի՝ մինչ հիվանդանոց տեղափոխվելու առողջական վիճակի վերոգրյալ զարգացումների մասին, որի վերաբերյալ ընդունող բժիշկ Լիլիթ Վարդանյանը գրառումներ է կատարել Լիա Միսակյանի հիվանդության պատմագրում): Երեխային տեղափոխել են «Արաբկիր» ԲԿ, քանի որ Գեորգի Միսակյանն այդ բժշկական կենտրոնում բժշկական ապահովագրություն է ունեցել: «Արաբկիր» ԲԿ-ի ընդունարանում հիվանդին ընդունել է հերթապահ բժշկուհի Լիլիթ Վարդանյանը, լսել է թոքերը, զննել է կոկորդը և հայտնել, որ երեխայի մոտ վիրուսային ֆոն է և նախնական ախտորոշել է սուր շնչառական վարակ, ֆեբրիլ ցնցումներ: Բժշկի կողմից նշանակվել են ջերմիջեցնողներ, քթի մաքրում, կաթիլային՝ NaCl լուծույթ: Երեխան հոսպիտալացվել է՝ բժշկական հսկողության տակ գտնվելու և ստացիոնար բուժում ստանալու նպատակով, ընդունող բժշկի կողմից նշանակվել են նաև արյան և մեզի ու կղանքի անալիզներ, որի մասին իրենց ցուցմունքներում հայտնեցին ծնողները, նույն ինքը՝ բժիշկ Լիլիթ Վարդանյանը:

Պետք է ընդգծել, որ դատաքննության ընթացքում հարցաքննված «Արաբկիր» բժշկական կենտրոնի աշխատակիցների (այդ թվում՝ սույն գործով մեղադրվող Լիլիթ Վարդանյանի և Զարինե Այվազյանի) ցուցմունքներն ուղղված էին Լիա Միսակյանի մահվան իրական հանգամանքները թաքցնելուն, որի նպատակն ըստ մեզ ինչպես բուժանձնակազմի, այնպես բժշկական կենտրոնի թերությունների քողարկումն է: Ընդ որում, մտահոգիչ է նաև այն փաստը, որ Լիա Միսակյանի մահվան գործով նախաքննության ընթացքում և դատարանում հարցաքննված «Արաբկիր» ԲԿ-ի բոլոր աշխատակիցները շարունակում են աշխատել բժշկական կենտրոնում և բավականին ժամանակ ու իրական հնարավորություն ունենին միմյանց հետ համաձայնեցնելու իրենց ցուցմունքների բովանդակությունը:

Մասնավորապես, որպես նշվածի վառ օրինակ դատաքննության ընթացքում այդպես էլ չպարզվեց՝ արդյոք 2012 թվականի դեկտեմբերի 31-ից մինչև 2013 թվականի հունվարի 2-ը բժշկական կենտրոնի լաբորատորիան աշխատել է, թե ոչ:

1. Լիա Միսակյանի մահվան գործով հիմնական հանգուցային խնդիրները վերաբերում էին արյան անալիզի համար նմուշներ վերցնելու բժշկական ցուցման, այդ թվում՝ արյան նմուշ վերցնելու, արյան նմուշը անալիզի ենթարկելու և անալիզի արդյունքները ստանալու հարցերին:

Այսպես, իր դատաքննական ցուցմունքում Լիա Միսակյանի մայրը՝ Աշխեն Բաբայանը, նշեց, որ արյան նմուշը վերցվել է հիվանդանոց ընդունվելու օրը: Այդ մասին, նախաքննության ընթացքում հայտնել էր նաև 2012 թվականի դեկտեմբերի 31-ին բոքսային բաժանմունքի հերթապահ բուժքույր Լարիսա Վարդանյանն՝ իր 2013 թվականի հունվարի 23-ի բացատրությամբ և 2013 թվականի հուլիսի 14-ի ցուցմունքով: Նշված ցուցմունքում բուժքույրը մանրամասնում է, որ կաթիլայինը և վազոֆիքսը միացնելուց հետո իր կողմից վերցվել է արյան նմուշը և ուղարկվել լաբորատորիա՝ հետազոտության: Ընդ որում, նույն ցուցմունքում Լարիսա Վարդանյանը հայտնում է, որ հերթապահությունը հանձնելու ժամանակ Լիա Միսակյանի արյան անալիզը դեռևս ստացված չի եղել, ինչի մասին ինքը հայտնել է հերթապահությունն ընդունող բուժքրոջը: Իր՝ 2013 թվականի հուլիսի 15-ի նախաքննական ցուցմունքում բժշկուհի Լիլիթ Վարդանյանը ևս նշել է, որ բուժքրոջ կողմից արյան նմուշը վերցվել է 2013 թվականի դեկտեմբերի 31-ին, 21:00-ի սահմաններում: Պետք է հատկապես ընդգծել այն փաստը, որ առկա գրառումները վկայում են, որ կաթիլայինը նշանակվել է բժշկուհու ցուցումով, ինչը նպատակ չի հետապնդել արյան նմուշը վերցնելուն խոչընդոտող հանգամանքները վերացնելու, այն է՝ արյան մակարդեղիությունը վերացնելու հետ: Ամբաստանյալներին մեղադրանք առաջադրելուց հետո, դեպքից մեկ տարի անց Լարիսա Վարդանյանը վերհիշել էր Լիա Միսակյանի արյան նմուշը վերցնելու այլ մանրամասներ: Մասնավորապես, վերջինս իր՝ 2014 թվականի հունվարի 17-ի նախաքննական ցուցմունքում հայտնել է, որ 2012 թվականի դեկտեմբերի 31-ին Լիա Միսակյանի արյան նմուշը հնարավոր չի եղել վերցնել, քանի որ արյունը մակարդվել է, արյան նմուշ իր կողմից վերցվել է 2013 թվականի հունվարի 1-ի առավոտյան և փոխանցվել լաբորատորիա:

Դատաքննության ընթացքում 2012 թվականի դեկտեմբերի 31-ին բոքսային բաժանմունքի մայրապետ Ռուզաննա Օհանյանը մեղադրողի հարցերին ի պատասխան նշեց, որ Լիա Միսակյանից արյան նմուշը վերցվել է 2012 թվականի դեկտեմբերի 31-ին միջամտությունների սենյակում, որտեղ գտնվել են հերթապահ բուժքույր Լարիսա Վարդանյանը, մյուս բուժքույրը և երեխայի մայրը: Ինքն սպասել է միջանցքում և այնուհետև արյան նմուշը տարել լաբորատորիա: Բոքսային բաժանմունքի մայրապետ Ռուզաննա Օհանյանն իր ցուցմունքում նաև նշեց, որ 2012 թվականի դեկտեմբերի 31-ին արյան անալիզի համար մեկ նմուշ է տարել: Ռուզաննա Օհանյանը հայտնեց, որ 2013 թվականի հունվարի 1-ի առավոտյան Լիլիթ Վարդանյանի հերթապահության ավարտին

Լիա Միսակյանից կրկին արյան նմուշներ են վերցվել՝ բիոքիմիական հետազոտության համար: Մի քանի անգամ հիշյալ հանգամանքի շուրջ մեղադրողի և տուժողի իրավահաջորդի ու վերջինիս ներկայացուցչի կողմից հարցերին պատասխանելուց հետո վկա Ռուզաննա Օհանյանը տվեց նույնաբովանդակ ցուցմունք, սակայն նախագահող դատավորի կողմից գործով այլ տվյալներ ձեռք բերվելու մասին հայտնելուց հետո, վկան նշեց, որ գուցե ինքը Լիա Միսակյանի անալիզն այլ անալիզի հետ է շփոթում, բայց միանշանակ պատասխան չտվեց:

2. Հաջորդ խնդիրը վերաբերում է արյան անալիզի նախնական արդյունքների մասին բոքսային բաժանմունք հայտնելու գործողության հստակությանը:

Գործով տուժողի իրավահաջորդ Գեորգի Միսակյանը դատաքննության ընթացքում տրված ցուցմունքում հայտնեց, որ 2013 թվականի հունվարի 1-ին բուժքույրը երեխայի մորը Աշխեն Բաբայանին հայտնել է, որ երեխայի արյան մեջ լեյկոցիտների քանակը ցածր է: Աշխեն Բաբայանն իր ցուցմունքում ևս նշեց, որ արյան անալիզի արդյունքում պարզվել է, որ երեխայի արյան մեջ լեյկոցիտների քանակը ցածր է: Դատաքննության ընթացքում տրված ցուցմունքով «Արաբկիր» ԲԿ-ի կլինիկական լաբորատորիայի 2013 թվականի հունվարի 1-ի հերթապահ բժշկուհի Լիաննա Արզումանյանը հայտնեց, որ Լիա Միսակյանի արյան անալիզը կատարելու ընթացքում նկատել է շեղումներ և այդ մասին տեղեկացրել բոքսային բաժանմունք, մասնավորապես, նախ զանգահարել է բոքսային բաժանմունքի բժիշկների հեռախոսահամարին, քանի որ վերջիններս չեն պատասխանել, զանգահարել է բոքսային բաժանմունքի բուժքույրերին և տեղյակ պահել շեղումների մասին: Այդ մասին հարցաքննության ժամանակ փաստեց նաև լաբորատորիայում հունվարի 1-ին հերթապահություն իրականացրած բժիշկ-լաբորանտ Ֆլորա Վարդանյանը: Մինչդեռ, բոքսային բաժանմունքում 2013 թվականի հունվարի 1-ին հերթապահություն իրականացրած և գործով որպես վկա հարցաքննված բուժքույրեր Արմինե Կարապետյանն ու Սուսաննա Իսպիրյանը, ինչպես նաև ամբաստանյալները հերքեցին այդպիսի զանգ ստանալու փաստը: Տվյալ պարագայում, սակայն, հարց է ծագում, թե բացի բոքսային բաժանմունքի բուժքույրերից, ով կարող էր Լիա Միսակյանի մորը հայտնել երեխայի արյան շեղումների մասին: Բնականաբար, տվյալ դեպքում զանգի հավաստիության հերքումը հնարավորություն է տալիս նվազեցնել բոքսային բաժանմունքի աշխատակիցների անմիջական պատասխանատվությունը ոչ պատճառ բուժօգնություն ցույց տալու հարցում, այն դեպքում, երբ անալիզի պատասխանի ստացումից անմիջականորեն կախված էր հիվանդի հիմնական ախտորոշման, նշանակված բուժման հիմնավորվածություն ստուգելը, որակյալ բուժումը շարունակելը կամ ստացված անալիզի տվյալների հիման վրա այլ բուժում նշանակելը: Անհրաժեշտ է, արձանագրել, որ դատաքննությամբ հաստատվեց այն փաստը, որ բժշկական կենտրոն ընդունված ցանկացած հիվանդից վերցվում է արյան նմուշ և կատարվում արյան քննություն, որի պատասխաններին պատրաստ են լինում առավելագույնը 1-2 ժամվա ընթացքում:

3. Նախաքննության ընթացքում նշանակվել են երեք փորձաքննություններ. հանձնաժողովային դատաբժշկական թիվ 13-0410 փորձաքննության եզրակացությունը, որը կատարվել է «Փորձաքննությունների ազգային բյուրոյի» դատաբժշկական փորձագիտական հանձնաժողովի կողմից, կրկնակի դատաբժշկական թիվ 10/հձ/կ փորձագիտական եզրակացությունը, որը կատարվել է ՀՀ ԱՆ հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոնի կողմից, ինչպես նաև Լիա Միսակյանի դիակի դատաբժշկական փորձաքննության թիվ 20 եզրակացությունը, որը կատարվել է ՀՀ ԱՆ հանրապետական դատական բժշկության գիտագործնական կենտրոնի դիահերձարանում՝ փորձագետ Ս. Սևոյանի կողմից:

Հանձնաժողովային դատաբժշկական թիվ 13-0410 փորձաքննության եզրակացությամբ փորձագետները գտել են, որ **սեպտիկ բարդությունների զարգացման առանձնահատկություններով պայմանավորված, նշված թերությունների և բացթողումների ու Լիա Միսակյանի մահվան միջև անմիջական պատճառական կապ հաստատել հնարավոր չէ:**

Լիա Միսակյանի մահվան փաստի վերաբերյալ կատարված կրկնակի դատաբժշկական թիվ 10/հձ/կ փորձագիտական եզրակացությամբ սահմանվել է, որ Լիա Միսակյանի **ախորոշումը կատարվել է թերի, հիվանդի անամնեստիկ և օբյեկտիվ տվյալները վկայել են օրգանիզմի արտահայտված ինտոքսիկացիայի մասին, ինչը բնորոշ չէ նախնական դրված ախտորոշմանը՝ սուր շնչառական ինֆեկցիային, այլ ավելի բնորոշ է թոքաբորբին:** Եթե ընդունման պահին ճիշտ գնահատվեր հիվանդի վիճակը, ապա բժշկի կողմից նույն պահին անհրաժեշտ էր նշանակել հակաբակտերիալ բուժում, որը չի կատարվել: Փորձագիտական հանձնաժողովը գտել է, որ Լիա Միսակյանը պետք է ենթարկվեր ռենտգեն հետազոտության և ախտաբանական փոփոխություններ հայտնաբերվելու դեպքում, հաշվի առնելով նաև արյան քննության արդյունքները՝ նորմայից շեղումները, որոնք վկայել են օրգանիզմի պաշտպանական ցածր հատկությունների մասին, ապա անհրաժեշտ կլիներ հիվանդին շտապ տեղափոխել վերակենդանացման բաժանմունք, որտեղ պետք է իրականացվեր մշտադիտակում, իսկ բուժումը կատարել ինչպես ախտանիշային, այնպես էլ էթիո-պաթոգենետիկ, կատարելով կոմբինացված հակաբակտերիալ բուժումներ և արյան փոխներակիչների ներարկումներ: Նշված եզրակացությամբ փորձագետները գտել են, որ **«եթե ի սկզբանե ճիշտ գնահատվեր Լիա Միսակյանի առողջական վիճակը՝ օբյեկտիվ վիճակը, կազմակերպվեին ճիշտ հետազոտություններ, կատարվեր ճիշտ և ժամանակին ախտորոշում և համապատասխան բուժում, ապա չի բացառվում, որ հնարավոր կլիներ կանխելու հիվանդության արագ և հարաճուն բացասական պրոգրեսիվող ընթացքը /.../»:** Գործի դատաքննության փուլում փորձագետները հարցաքննությունների ժամանակ պնդեցին իրենց կողմից տրված եզրակացությունները:

Սույն ճառի շրջանակներում հարկ ենք համարում անդրադառնալ փորձագիտական եզրակացությունների գնահատման հարցին: Մասնավորապես, հանձնաժողովային դատաբժշկական թիվ 13-0410 փորձաքննության եզրակացությամբ փորձագետները

հետևությունն էին կատարել այն մասին, որ «Լիա Միսակյանի մոտ արյան մեջ լեյկոցիտների քանակների նման պակասումը վկայում է նրա մոտ խմունիտետի խիստ ընկճված լինելու մասին, որի դեպքում խիստ բարձրանում է սեպտիկ բարդությունների **զարգացման հնարավորությունը և արագությունը, որոնք կարող են ունենալ կայծակնային բնույթ**»: Չնայած այն հանգամանքին, որ եզրակացությամբ փորձագետները հետևություն են կատարել սեպտիկ հիվանդությունների առաջացման հնարավորության մասին, սակայն հարցաքննությունների ընթացքում որպես թարախաֆիբրինային պլյուրոպնևմոնիայի և նշիկաբորբի առաջացման միակ պատճառ նշեցին ագրանուլացիտոզը: Հատկանշանական է հատկապես այն փաստը, որ նշված փորձագիտական եզրակացությամբ փորձագետներն արձանագրել են ամբաստանյալների կողմից թույլ տրված այնպիսի խախտումներ, ինչպիսիք են արյան ընդհանուր և բիոքիմիական քննության համար նմուշները 2013 թվականի հունվարի 1-ին վերցնելը և հետազոտության արդյունքները նույն օրը տվյալ բաժանմունքում հերթապահ բուժանձնակազմի տրամադրության տակ չլինելը և այդ հետազոտության արդյունքներին միայն 2013 թվականի հունվարի 2-ին անդրադարձ կատարելը, Լիա Միսակյանի վերաբերյալ ստացիոնար հիվանդի բժշկական քարտի թերի լրացված լինելը 2013թ. հունվարի 1-ի հերթապահության ընթացքում: Հիշյալ փորձաքննությունը սկսվել է 2013 թվականի փետրվարի 12-ին և ավարտվել է նույն թվականի հուլիսի 2-ին: Փորձաքննության կատարման ժամանակ փորձագետներին են տրամադրվել նաև գործի նյութերը, սակայն մինչև 2013 թվականի հուլիսի 2-ը գործի նյութերում առկա չէ այնպիսի տվյալ, որը հավաստի, որ արյան նմուշները Լիա Միսակյանից վերցվել են 2013 թվականի հունվարի 1-ին: Այդ մասին նախաքննության ընթացքում հայտնել է Լարիսա Վարդանյանն իր՝ 2014 թվականի հունվարի 17-ի ցուցմունքում: Տվյալ դեպքում, հարց է ծագում, թե ինչ փաստական հիմքով է փորձագիտական եզրակացության հետևություններում նման փաստ արձանագրվել, այն դեպքում, երբ գործի նյութերում փորձաքննության ավարտին տվյալներ առկա չեն եղել 2013թ. հունվարի 1-ին անալիզը վերցնելու մասին (դատաքննության ընթացքում փորձագետ Աննա Չոբանյանը նշեց, որ այդ տվյալն իրենք նայել են գործի նյութերից): Բացի այդ, փորձագետները հայտնաբերել են թույլ տրված խախտումներ և արձանագրել, որ **նպատակաուղղված լիարժեք բուժօգնության առավել վաղ ցուցաբերումը մեծացնում է բարենպաստ ելքի շանսերը**, սակայն դա լիարժեք երաշխիք չի հանդիսանում, քանի որ նման ագրանուլոցիտոզի պայմաններում, ըստ գրականության տվյալների, մահացությունը զգալի բարձ է: Նշվածը փաստում է, որ արյան անալիզի պատասխանի վաղ ստացումը կարող էր կանխել ծանր հետևանքի՝ մահվան առաջացումը: Ավելին, դատաքննության ընթացքում փորձագետները պնդեցին, որ ագրանուլոցիտոզը կարող էր հայտնաբերվել միայն արյան քննության արդյունքների հիման վրա, հետևաբար՝ դրանց արդյունքների վաղ հետազոտումը կարող էր մեծացնել բարենպաստ ելքի շանսերը, հատկապես այն դեպքում, երբ դատաքննության ընթացքում պարզվեց, որ մահացության տոկոսը մոտավորապես կազմում է 30: Դատաքննության ընթացքում տուժող կողմի հարցերին ի պատասխան փորձագետները պնդեցին, որ ագրանուլոցիտոզը կարող է հայտնաբերվել

միայն արյան քննության արդյունքներով, ըստ նրանց՝ չկան կոնկրետ ախտանիշներ, որոնք կարող են վկայել դրա մասին: Մեր կողմից ուսումնասիրված գրականությունն այդ առումով հակասում է փորձագետների տված պատասխաններին: Մասնավորապես, տարբեր էլեկտրոնային կայքէջերից հանված տեղեկությունները փաստում են, որ անձի մոտ որոշակի կոնկրետ վիճակի առկայությունը պետք է հիմք տա ենթադրելու ագրանուլոցիտազի մասին, որի հաստատման համար պետք է նշանակվի արյան քննություն: Բացի այդ, ագրանուլոցիտոզի առկայությունը հաստատվելու դեպքում անձը պետք է խիստ մեկուսացման պայմաններում բուժում ստանա, պետք է կատարվի արյան փոխներարկում, մինչդեռ, այս հանգամանքների շուրջ փորձագետները չկարողացան հստակ պատասխաններ տալ:

Այս առումով կրկնակի դատաբժշկական փորձաքննության եզրակացությամբ հստակ արձանագվել են արյան փոխներարկման և Լիա Միսակյանին վերակենդանացման բաժանմունք տեղափոխելու անհրաժեշտությունը: Հատկանշանական է, որ նշված եզրակացությամբ չի հերքվել երեխայի մոտ ագրանուլոցիտոզի առկայությունը, սակայն նշված եզրակացությամբ այն դիտվել է որպես թոքաբորբի հետևանք: Կրկնակի դատաբժշկական փորձաքննությամբ գնահատվել են օբյեկտիվ և անամնեստիկ տվյալները, որոնք էլ հիմք են հանդիսացել երեխայի մոտ թոքաբորբի առկայությունը հաստատելու համար: Ընդ որում, դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացությամբ նույնպես հաստատվել է Լիա Միսակյանի մոտ թարախաֆիբրինային պլյուրոպնևմոնիայի և թարախաֆիբրինային նշիկաբորբի առկայությունը: Բացի այդ, երկու փորձաքննությունների փորձագետները հստակ նշեցին, որ հնարավոր է որոշել թոքաբորբի և նշիկաբորբի վաղեմությունը, մինչդեռ հանձնաժողովային դատաբժշկական թիվ 13-0410 փորձաքննության փորձագետները հերքեցին նման հնարավորությունն ընդհանրապես: Տվյալ դեպքում, վերլուծելով այս ամբողջը, պետք է ընդգծել, որ թիվ 13-0410 փորձաքննության եզրակացությունը թերի է, ոչ ամբողջական, նրանում ներառվել են տվյալներ, որոնք բացակայել են գործի նյութերում այդ փորձաքննությունը կատարելու ժամանակ, այսինքն չեն բխում գործի նյութերից, հետևաբար, սույն գործի շրջանակներում այդ եզրակացությունը չպետք է դիտել որպես թույլատրելի ապացույց:

Արարքի քրեաիրավական որակում

Ամբաստանյալներ Լիլիթ Վարդանյանին և Զարինե Այվազյանին մեղադրանք է առաջադրված ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածով նախատեսված արարքի կատարման համար: Սույն հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիան հանգում է հետևյալին՝ «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝ դրանց նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով: Արարքը որակվում է սույն հոդվածի 2-րդ մասով, եթե այն անզգուշությամբ առաջացրել է բուժվող հիվանդի մահ:

Նշված արարքը հանդիսանում է անձի կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություն, որի հանցակազմը նյութական է, այսինքն՝ պարտադիր է հետևանքի առաջացումը: Արարքի օբյեկտիվ կողմը դրսևորվում է անգործությամբ, այն է՝ մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որի արդյունքում անգուշությամբ առաջացել է բուժվող հիվանդի մահ: Նշված արարքի սուբյեկտիվ կողմը դրսևորվում է միայն անգուշությամբ, այսինքն՝ երբ հանցանք կատարած անձը չի գիտակցել իր արարքի հանրային վտանգավորության բնույթը և չի նախատեսել հետևանքի առաջացումը:

Տվյալ դեպքում անհրաժեշտ է վերլուծել Լիլիթ Վարդանյանի և Զարինե Այվազյանի գործողությունների բնույթը:

Մասնավորապես, Լիլիթ Վարդանյանը երեխայի հիվանդանոց ընդունվելու ժամանակ տվել է ոչ ճիշտ նախնական ախտորոշում: Ունենալով հիվանդի անամնեստիկ տվյալները, որոնք արդեն իսկ վկայել են երեխայի մոտ թոքաբորբի առկայության մասին՝ այն է ջերմության առկայությունը, փսխման և ֆեբրիլ ցնցման հանգամանքները, բժիշկը ախտորոշել է սուր շնչառական վարակ: Կրկնակի դատաբժշկական փորձաքննության եզրակացությամբ հստակ հիմնավորվել է հիշյալ խախտումը: Բացի այդ, նշանակելով արյան, ինչպես նաև մեզի և կղանքի քննություն, բժիշկը չի հետևել դրանց նմուշների և անալիզների պատասխանների ստացմանը, մի գուցե հնարավորություն չի ունեցել ստանալու, բայց այդ մասին նա լռում է: Մինչդեռ, իր աշխատանքային պայմանագրով մի շարք պարտականությունների շարքում կրել է նաև միջին բուժանձնակազմի կլինիկական գործունեությունը՝ նշանակումների ճշգրիտ ու ժամանակին կատարումը վերահսկելու պարտականություն, ինչպես նաև օժանդակ՝ լաբորատոր-գործիքային հետազոտությունների նպատակային կիրառումը և դրանց արդյունքների վերլուծությունն ապահովելու պարտականություն:

Տվյալ դեպքում, նույնիսկ հիմք ընդունելով այն տվյալը, որ Լարիսա Վարդանյանի կողմից արյան նմուշը վերցվել է միայն 2013 թվականի հունվարի 1-ի առավոտյան, Լիլիթ Վարդանյանը դրսևորել է անգործություն իր աշխատանքային պարտականությունների կատարման տեսակետից: Դատաքննության ընթացքում հստակեցվեց այն հանգամանքը, որ արյան ընդհանուր քննության անալիզի վերջնական պատասխանը կարող էր պատրաստ լինել միայն լաբորատորիայի բժշկի կողմից, սակայն հերթապահություն իրականացնող լաբորանտը, ստանալով արյան քննության նախնական արդյունքները և շեղումներ հայտնաբերելով, պարտավոր էր այդ մասին տեղյակ պահել հերթապահ բժշկին: Այսինքն՝ արյան նմուշների ժամանակին ստացումն ու լաբորատորիա փոխանցումը, և պատասխանների մասին ժամանակին տեղեկացնելը բուժող բժշկին, կարող էր հնարավորություն ստեղծել ստանալ արյան անալիզի նախնական տվյալներ, իմանալ առկա շեղումների մասին, որոնք հիմք կտային ճիշտ բուժում նշանակել կամ հանել այն դեղորայքը, որը կարող էր պատճառ դառնալ երեխայի առողջական վիճակի բացասական զարգացման համար: Հատկապես անհրաժեշտ է ընդգծել այն փաստը, որ ըստ Լարիսա Վարդանյանի դատաքննական ցուցմունքի, վերջինս չի ցանկացել երեխային

անհանգստացնել (երեխան լաց է եղել), այդ պատճառով որոշել է արյան նմուշը վերցնել հաջորդ օրը: Մինչդեռ, «Արաբկիր» ԲԿ-ի բոքսային բաժանմունքի մյուս հերթապահ բժիշկ Իրինա Մամյանը վստահաբար նշեց, որ բուժքույրը պետք է կատարեր բժշկի ցուցումները, իսկ արյան նմուշը չվերցնելու դեպքում պետք է տեղյակ պահեր բժշկին:

Իսկ ինչ վերաբերում է Ջարինե Այվազյանին, ապա այս դեպքում ավելի քան պարզ է, որ հերթափոխի ընդունման ժամանակ երեխայի պատմագրում տեսնելով արյան քննություն նշանակված լինելու և պատասխանը չստացված լինելու փաստը, վերջինս իր հերթապահության ողջ ընթացքում չի հետևել արյան քննության արդյունքների ստացմանը, որոնցից էլ պետք է կախված լիներ իր կողմից նշանակված բուժօգնության հիմնավորվածությունն ու որակը: Նա, որպես հերթապահություն իրականացնող բժշկուհի, պարտավոր էր իր հերթապահության ընթացքում ձեռնարկել միջոցներ միջին բուժանձնակազմի միջոցով դեռևս 2012 թվականի դեկտեմբերի 31-ին նշանակված արյան քննության արդյունքները ստանալու համար, հատկապես այն դեպքում, երբ ըստ հիվանդանոցում ձևավորված կարգի, արյան քննության վերջնական արդյունքները տալու պարտականություն կրող կլինիկական լաբորատորիայի բժիշկն իր աշխատանքային պարտականությունները պետք է կատարեր մինչև հունվարի 1-ի ժամը 17:00-ի սահմանները: Բացի այդ, Ջարինե Այվազյանը պատշաճորեն չի լրացրել երեխայի ստացիոնար հիվանդի բժշկական քարտը: Այդ խախտումն արձանագրվել է կրկնակի դատաբժշկական թիվ 10/հձ/կ ու հանձնաժողովային դատաբժշկական թիվ 13-0410 փորձաքննությունների եզրակացություններում, և համապատասխան գրառումների բացակայությունն ուղղակիորեն փաստում է բժշկական ցուցումների բացակայության մասին: Ծնողները մոտեցել են և իրենց անհանգստությունը հայտնել երեխայի վիճակի վատթարացման մասին, սակայն, հերթապահություն իրականացող բժշկուհի Ջարինե Այվազյանն անհանգստանալու պատճառ չի տեսել և չի փորձել այլ միջոցներ ևս ձեռնարկել:

2013 թվականի հունվարի 2-ին հերթապահությունը ստանձնած Իրինա Մամյանը երեխայի պատմագիրը և արյան քննության արդյունքները տեսնելուց, մայրիկի հետ զրուցելուց և երեխայի վիճակի մասին տեղեկանալուց անմիջապես հետո, շտապ նշանակել է ռենտգեն հետազոտություն: Ընդ որում, պետք է հատկապես ընդգծել այն փաստը, որ Իրինա Մամյանը երեխայի վիճակը գնահատել է առնվազն 2013 թվականի հունվարի 1-ի առավոտյան վերցված արյան նմուշի հիման վրա կատարված արյան քննության արդյունքներով: Դատաքննության ընթացքում երկու ամբաստանյալ բժիշկները պնդեցին, որ երեխայի վիճակն իրենց հերթապահությունների ընթացքում չի վատացել: Ջարինե Այվազյանը հերթապահությունն իրականացրել է մինչև 2013թ. հունվարի 2-ի առավոտ և փոփոխություններ երեխայի վիճակում չի տեսել: Մինչդեռ, Իրինա Մամյանը երեխայի մոտ շրջայց կատարելու ժամանակ նրա մոտ նկատել է դժվարաշնչություն, որն էլ պատճառ է հանդիսացել ռենտգեն հետազոտություն նշանակելու համար: Ծնողներն իրենց ցուցմունքներում նշեցին, որ երեխան դժվար է շնչել դեռևս 2013թ. հունվարի 1-ից, նրա կոկորդից, հագուստից վատ հոտ է եկել, որը կարող էր թարախի հետևանք լինել:

Հետևաբար, 2012 թվականի դեկտեմբերի 31-ին և 2013 թվականի հունվարի 1-ին հերթապահություն իրականացրած բժիշկները նույնպես պետք է նշանակեին ռենտգեն հետազոտություն, հետևեին արյան քննության արդյունքների ստացմանը, որից հետո տվյալների հավաստիությունը ճշտելու համար պետք է նշանակվեր կրկնակի արյան քննություն: Դժվարաշնչության մասին վկայում են նաև որպես փաստաթուղթ դատարան ներկայացված տեսագրությունները, դրանք կատարվել են 2013 թվականի հունվարի 1-ին և 2-ին: Նույնիսկ բժշկական գիտելիքներ չունեցող անձի համար կարող է պարզ լինել, որ երեխայի շնչառական ակտը մեկ բուլետում գերազանցում է սահմանված նորման՝ մոտավորապես կազմում է 50 և ավելի շնչառական ակտ, որը բնորոշ է թոքաբորբին:

Բացի այդ, պետք է նկատի ունենալ, որ դատաքննության ընթացքում չպարզվեց այն հանգամանքը, թե ինչպես է արյան անալիզի պատասխանը հայտնվել Լիա Միսակյանի պատմագրում: Այնուամենայնիվ, հստակ է, որ Իրինա Մամյանի կողմից 2013 թվականի հունվարի 2-ին հերթապահությունն ընդունելու պահին այն արդեն իսկ փակցված է եղել երեխայի հիվանդության պատմագրում: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ անալիզի պատասխանը հիվանդության պատմագրում փակցված է եղել դեռևս Զարինե Այվազյանի հերթապահության ընթացքում: Մինչդեռ, ինչպես պնդեց վերջինս, ինքն անալիզի պատասխան չի տեսել: Այս փաստը ևս վկայում է անգործություն ցուցաբերելու՝ աշխատանքային պարտականությունների նկատմամբ անփույթ վերաբերմունք դրսևորելու մասին: Դատաքննության ընթացքում պարզվեց, որ արյան քննության արդյունքները կարող են վերջնական պատրաստ լինել 1-2 ժամվա ընթացքում, Լիա Միսակյանի արյան քննության արդյունքները պատրաստ են եղել 2013 թվականի հունվարի 1-ին ժամը 11:00-ի սահմաններում, սակայն դրանք ամբողջ հերթապահության ընթացքում այդպես էլ չեն ուսումնասիրվել հերթապահություն իրականացրած բժշկուհու կողմից:

Երեխայի օբյեկտիվ և անամնեստիկ տվյալների և արյան անալիզի պատասխանը ստանալու դեպքում Լիլիթ Վարդանյանի և Զարինե Այվազյանի կողմից պետք է առնվազն ձեռնարկվեին այն գործողությունները, որոնք ձեռնարկվել են Իրինա Մամյանի կողմից: Չնայած՝ վերջինիս գործողություններում էլ ըստ փորձաքննության եզրակացությունների, կան որոշակի խախտումներ՝ երեխային վերակենդանացման բաժանմունք չտեղափոխելու, բժշկական քարտը որոշակի թերություններով լրացնելու մասով, սակայն, այնուամենայնիվ, նրա կողմից ձեռնարկվել են Լիա Միսակյան բժշկական քարտում գրառված մի շարք գործողություններ՝ երեխայի առողջական վիճակի հետազոտման ուղղությամբ: Հրավիրվել է վերակենդանացման բաժանմունքի բժիշկը՝ խորհրդատվական նպատակով և վերջինս երեխային վերակենդանացման բաժանմունք տեղափոխելու անհրաժեշտություն չի տեսել: Ընդ որում, հատկապես կարևոր է այն փաստը, որ լեյկոցիտների նման ցածր քանակության դեպքում անհրաժեշտ էր հակաբակտերիալ բուժում իրականացնել՝ վիրուսի դեմ պայքարելու համար, քանի որ երեխայի օրգանիզմի դիմադրողականությունը խիստ ցածր է եղել: Մինչդեռ, 2013 թվականի հունվարի 2-ին վերցված արյան նմուշով կատարված արյան քննության արդյունքները փաստում են, որ

բժշկական հիմնարկ ընդունվելուց հետո երեխայի լեյկոցիտների քանակը նվազել է՝ առնվազն 1,8-ից դարձել է 1,4, այսինքն՝ ցուցաբերված բուժօգնությունն ու ստացված բուժումը բացասաբար են ազդել երեխայի առողջական վիճակի վրա: Դատաքննության ընթացքում միանշանակ հաստատվեց այն հանգամանքը, որ լեյկոցիտների ցածր քանակի դեպքում պետք է հանվեին նշանակված դեղամիջոցները և նշանակվեր հակաբակտերիալ բուժում:

Այսպիսով, վերոգրյալը փաստում է, որ ամբաստանյալների արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի հատկանիշները:

Բժշկական կենտրոնի կողմից ոչ պատշաճ ծառայությունների մատուցման հիմնավորում

Սույն ճառի շրջանակներում հարկ ենք համարում անդրադառնալ նաև որոշ խախտումների, որոնք փաստում են «Արաբկիր» ԲԿ-ի կողմից թույլ տրված որոշ խախտումների, թերությունների, որոնք առնչություն ունեն սույն գործին:

Այսպես՝

1. դատաքննության ընթացքում պարզ դարձավ, որ բժշկական կենտրոնում չկան ներքին կանոնակարգ, որով կկարգավորվեն հիվանդ-բուժող բժիշկ-միջին բուժանձնակազմ հարաբերությունները, պարտականությունների իրականացման մեխանիզմները,
2. տոնական օրերին բժշկական կենտրոնում հերթապահություն են իրականացրել միայն երկու բժիշկ՝ բոլոր բաժանմունքների համար: Դատաքննության ընթացքում պարզվեց, որ «Արաբկիր» ԲԿ-ն ունի յոթ բաժանմունք, Լիա Միսակյանի մահվան դեպքի օրերին հիվանդանոցում բուժում են ստացել 102 հիվանդ, հերթապահության ընթացքում ընդունվել են ևս 7 հիվանդ, իսկ ընդունարանում ամբուլատոր կարգով զննվել է 28 հիվանդ: Բժշկական կենտրոնը կրում է իր հիվանդանոցի ծառայություններից օգտվող հիվանդներին պատշաճ բուժօգնություն տրամադրելու պարտականություն, սակայն, դատաքննության ընթացքում գործով հարցաքննված բուժանձնակազմի գրեթե բոլոր ներկայացուցիչները վկայակոչեցին, որ հիվանդները շատ են եղել և բժիշկները չեն հասցրել բավարար ժամանակ տրամադրել բոլոր հիվանդներին սպասարկելու համար,
3. դատաքննության արդյունքների հիման վրա մեր մոտ համոզմունք է ձևավորվել, որ տոնական օրերին հիվանդանոցի լաբորատորիան չի աշխատել կամ ոչ լիարժեք: Չնայած այն հանգամանքին, որ լաբորատորիայում հերթապահություն է իրականացվել լաբորանտի կողմից, սակայն դատաքննության ընթացքում հաստատվեց, որ լաբորանտը չի կարող վերջնական արդյունքներ տալ, քանի որ դա գրառվում է բժշկի կողմից,

4. դատաքննության ընթացքում պարզվեց, որ 2012 թվականի դեկտեմբերի 31-ին լաբորատորիայիում բժիշկ չի հերթապահել: Մասնավորապես, դատաքննության ընթացքում հարցաքննված լաբորանտ Նաիրա Քոչարյանը նշեց, որ իր կողմից հերթապահություն է իրականացվել 2012 թվականի դեկտեմբերի 31-ին, նշեց, որ հերթապահության ժամանակ շտապ ցուցումով արյան անալիզի նմուշ չի ստացվել, եթե այդպիսին լիներ, ինքը պետք է կանչեր տնային հերթապահություն իրականացնող բժշկին, սակայն վերջինս չկարողացավ նշել, թե ով է եղել տնային հերթապահություն իրականացող բժիշկը: Միաժամանակ, 2013 թվականի հունվարի 1-ին լաբորատորիայում հերթապահություն իրականացրած բժիշկն իր ցուցմունքում նշեց, որ լաբորատորիան նախորդ օրը չէր աշխատել: Բացի այդ, այդ մասին իրենց ցուցմունքներում նշեցին նաև Գեորգի Միսակյանը և Աշխեն Բաբայանը, որոնց բուժքույրերը տեղյակ էին պահել, որ մեզի և կղանքի նմուշները անհրաժեշտ չեն, քանի որ լաբորատորիան չի աշխատում:
5. Լիլիթ Վարդանյանը և Զարինե Այվազյանը չեն հանդիսացել բոքսային բաժանմունքի բժիշկներ, մասնավորապես, Լիա Միսակյանի «Արաբկիր» ԲԿ ընդունվելու պահին Լիլիթ Վարդանյանն ըստ թիվ 1315 աշխատանքային պայմանագրի և թիվ 1315/3 համաձայնագրի հանդիսացել է մանկաբուժական ծառայության հերթապահ մանկաբույժ, իսկ Զարինե Այվազյանը՝ ըստ թիվ 1187 աշխատանքային պայմանագրի, թիվ 1187/2 և 1187/3 համաձայնագրերի՝ մանկաբույժ-ալերգոլոգ: Մինչդեռ, Լիլիթ Վարդանյանը և Զարինե Այվազյանը, համապատասխանաբար 2012 թվականի դեկտեմբերի 31-ին և 2013 թվականի հունվարի 1-ին հերթապահություն են իրականացրել «Արաբկիր» ԲԿ-ի բոլոր բաժանմունքներում, այդ թվում նաև՝ բոքսային բաժանմունքում:

Ողջ վերոգրյալի հիման վրա մենք պնդում ենք, որ Լիա Միսակյանի մահվան գործով մեղադրվող բժիշկներ Լիլիթ Վարդանյանի և Զարինե Այվազյանի կողմից ոչ պատշաճ բժշկական օգնության տրամադրման, ինչպես նաև «Արաբկիր» ԲԿ-ի լաբորատորայի չաշխատելու արդյունքում խախտվել է Լիա Միսակյանի կյանքի իրավունքը, որը պաշտպանվում է ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածով, ՀՀ-ի կողմից վավերացված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով: Այսպես, ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք», իսկ կոնվենցիայի 2-րդ հոդվածն ամրագրում է, որ «Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով»: Միաժամանակ, ցանկանում ենք նշել, որ Լիա Միսակյանի մահվան փաստով ոչ պատշաճ քննություն կատարելու դեպքում Հայաստանի Հանրապետությունն, ի դեմս՝ դատարանի, կիսախտի սույն գործով տուժող 2 ամյա Լիա Միսակյանի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով ու Մարդու իրավունքների և հիմնարար

ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածով ամրագրված՝ իր իրավունքների արդյունավետ պաշտպանության իրավունքը:

Ելնելով նախաքննության և դատաքննության տվյալներից, Լիա Միսակյանի ծնողների՝ Գեորգի Միսակյանի և Աշխեն Բաբայանի, ամբաստանյալների, գործով ներգրավված վկաների ցուցմունքներից և գործով ձեռք բերված մյուս փաստական տվյալներից, գտնում ենք, որ Լիլիթ Վարդանյանի և Զարինե Այվազյանի գործողություններն ու անգործությունը անմիջական պատճառական կապի մեջ են գտնվում Լիա Միսակյանի մահվան հանգամանքի հետ, ուստի դիմում ենք Դատարանին՝ կատարված արարքում նրանց մեղավոր ճանաչելու պահանջով:

Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչներ՝

Ա. Սաքունց
Տ. Սիրադեղյան
04.05.2015թ.